ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ապրիլի 2014թ. N_____-Ա

ՈՐՈՇՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ԵՎ «ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻԱՑՄԱՆ ՁԵՎՈՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ, 20-րդ հոդվածներով, 67-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով և 68-րդ հոդվածի 8-րդ մասով և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Երևանի ենթակայության «Երևանի ավտոբուս» և «Ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերությունները վերակազմակերպել՝ «Ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերությունը միացնելով «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերությանը:

2. Երևանի քաղաքապետին՝ եռամսյա ժամկետում սահմանված կարգին համապատասխան ապահովել «Երևանի ավտոբուս» և «Ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերությունների վերակազմակերպման գործընթացի իրականացումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

# ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ավտոբուս փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է Երևան քաղաքում ավտոտրանսպորտով ուղևորափոխադրումների կազմակերպման արդյունավետության բարձրացման և Երևանի ենթակայության «Երևանի ավտոբուս» և «Ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերությունների (այսուհետ՝ Ընկերություններ) առողջացման անհրաժեշտությամբ:

Ընկերությունները 2012-2013թթ. ընթացքում, ինչպես նաև մինչ օրս, աշխատել են վնասով, քանի որ Ընկերությունների ստացած եկամուտները չեն փակում կատարվող ծախսերը:

«Ավտոբուս» ՓԲԸ-ն չունի համապատասխան ֆինանսական և կադրային ռեսուրսներ ազգաբնակչությանը անհրաժեշտ ծավալի և որակի ծառայություններ մատուցելու, ինչպես նաև սեփական ռեսուրսներով զարգանալու համար, ուստի անհրաժեշտ է այն վերակազմակերպել՝ «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի հետ միացման ճանապարհով, հաշվի առնելով որ վերջինս իրականացնում է նմանատիպ գործունեություն և վերակազմակերպման արդյունքում հնարավորություն կընձեռնվի կրճատել վարչական ծախսերը:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Ավտոբուս փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն։

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ավտոբուս փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ